

Ս. Ղազարյան

ՀԱՅԵՐԵՆ ԳՐԱԿԱՆ ԼԵԶՎԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ
ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ՝

Լեզուն պատմական կատեգորիա է, հասարակական գիտակցության որոշ
ձև, որը կերպարանափոխման է ենթարկվում հասարակության արտադրու-
թյան եղանակով պայմանավորված հասարակական հարաբերությունների
փոփոխման համընթաց: «Հասարակության հոգևոր կյանքի ձևավորման
աղբյուրը,—ասում է ընկեր Ստալինը,—հասարակական իդեանների, հասա-
րակական թեորիաների, քաղաքական հայացքների, քաղաքական հիմնարկ-
ների ծաղման աղբյուրը պետք է փնտրել ոչ թե հենց այդ իդեանների,
թեորիաների, հայացքների, քաղաքական հիմնարկների մեջ, այլ հասարա-
կության նյութական կյանքի պայմանների մեջ, հասարակական կեցու-
թյան մեջ, որի արտացոլումն են այդ իդեանները, թեորիաները, հայացքները
և այլն»:

Փոխվեցին հասարակության նյութական կյանքի պայմանները, կփոխ-
վեն նաև դրանցով պայմանավորված իդեոլոգիաները: Եթե թե ինչու սո-
ցիալիստական հասարակարգում բոլոր իդեոլոգիաները գիտությունն ու
արվեստը, բարոյականությունն ու լեզուն և այլն տարբերվում են կապի-
տալիստական հարաբերություններից պայմանավորված իդեոլոգիաներից
և՛ իրենց բովանդակությամբ, և՛ կառուցվածքով, և՛ դրսևորման եղանակ-
ներով: Սոցիալիստական հասարակարգում առանձնապես ուժեղ է ընդգծ-
վում տնտեսության ու կուլտուրայի զարգացման մեջ գիտակցական ուղղվա-
ծությունը, քաղաքականության վճռական դերը: Մարդկային պատմության
մեջ առաջին անգամ հասարակության նյութական կյանքով պայմանավոր-
ված քաղաքականությունը դարձավ հասարակարգի կենսական շարժիչ ուժը,
ժարդկանց աշխարհայացքի, զաղափարախոսության ու բարոյախոսության
որոշիչ գործոնը: Մարդկային պատմության մեջ առաջին անգամ քաղաքակա-
նությունը իրականացվում է միլիոնավոր մասսաների ղեկավարությունն
ու նրանց արտադրական գործունեությունը՝ հսկայական երկրի բազմազգ
ժողովուրդների միասնության ու շահերի զուգակցման պայմաններում:
Այդ է պատճառը, որ ոչ միայն տալիս է փոխվել են մեր երկրի ժողո-
վուրդների հասկացողություններն ու գիտակցությունը, ամրացել նրանց
բարոյական-քաղաքական միասնությունը, այլև մեր երկիրը դարձել է աշ-
խարհի ամենազոր տերությունը և մեր կուլտուրան՝ մարդկության ամենա-
պրոգրեսիվ կուլտուրան:

Բոլշևիկյան պարտիայի քաղաքականության կարևոր խնդիրներից
մեկը գիտությունը, կուլտուրան ու արվեստը ժողովրդական լայն զանգված-

¹ Զեկուցված է Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Ն. Մանուկյան
Լեզվի Ինստիտուտի գիտական սեռիայում 1949 թ. դեկտեմբերի 26-ին:

² Համ. (բ) 9 պատմություն. Համառոտ դառնըթաց, 1944, էջ 166:

ների բարօրությունն ի սպաս դնելն է: Իսկ այդ հնարավոր է դառնում միայն այն ժամանակ, երբ վերանում է տարերայնությունը, երբ քաղաքական մոմենտը զգացվում է ամենուրեք: Լեզուն նույնպես զարգանում, բարդավաճում է մեր պարտիայի ու կառավարության ազգային քաղաքականության համապատասխան, քաղաքականություն, որը բացառում է ազգային որևէ լեզվի առանձնահատուկ արտոնությունները:

Տակավին տարիներ առաջ Լենինն ասել է՝ նա, ով չի ընդունում և չի պաշտպանում ազգերի և լեզուների իրավահավասարությունը, չի պայքարում ամեն տեսակի ազգային ճնշման և անիրավահավասարությունների դեմ, նա մարքսիստ չէ, նա նույնիսկ դեմոկրատ չէ:

Ահա թե ինչու ողջ մարքսիստներն ասում են, որ անհրաժեշտ է կազմակերպել դպրոցներ ազգային փոքրամասնությունների համար, դասավանդումը վարել մայրենի լեզվով, պետության հոնստիտուցիայի մեջ մտցնել այնպիսի կետ, որ ազդարարի իրավահավասարություն, ազգային փոքրամասնությունների իրավունքների անձեռնմխելիություն¹ Լենինի այդ հանճարեղ ցուցումները իրականացան միայն սոցիալիստական հասարակարգում, ուր պետությունը իր ամենօրյա հոգատարության առարկան դարձրեց ազգային փոքրամասնությունների զարգացման, նրանց կուլտուրայի ու լեզվի բարգավաճման գործը: Սովետական իշխանության հենց առաջին տարիներից մեր պարտիան հող տարավ փոքր ազգերի կուլտուրաների զարգացման համար: «Այժմ, — ասել է ընկեր Ստալինը 1921 թ. — երբ ազգային արտոնությունները ոչնչացված են, ազգությունների հավասարությունը կենսագործված է, իսկ ազգային փոքրամասնությունների համար ազատ ազգային զարգացման իրավունքն ապահովված է սովետական հասարակարգի հենց բնույթով, պարտիայի խնդիրն ազգային այդ խմբերի աշխատավորական մասսաների վերաբերմամբ այն է, որ օգնի նրանց՝ լիակատար կերպով օգտագործելու նրանց համար ապահովված ազատ զարգացման այս իրավունքը:

Սովետական պայմաններում միայն՝ գտնվեց ազգային հարցի ճիշտ լուծման բանալին: «Իրականում պրոլետարիատի դիկտատուրայի ու սոցիալիզմի կառուցման ժամանակաշրջանը ՍՍՌՄ-ում ազգային կուլտուրաների, — բովանդակությամբ սոցիալիստական և ձևով ազգային կուլտուրաների, — ծաղկման ժամանակաշրջան է»,² — ասում է ընկեր Ստալինը և ջախջախիչ հարված տալով վելիկոռուսական շովինիստներին՝ ընդգծում, որ ազգային կուլտուրաների զարգացումը՝ մայրենի լեզվով հանրապարտապիտակաբանական կրթություն մտցնելով ու ամրացնելով, պետք է նոր օւժով ծավալվի, որ ազգային կուլտուրաների զարգացման պայմաններում միայն կարելի կլինի հեռանալ ազգություններից, ինչպես հարկն է, հաղորդակից դարձնել սոցիալիստական շինարարության գործին:

Իրական հայերենը սովետական կարգերի շնորհիվ դարձավ պետական լեզու, դրանով վերացան նրա առաջընթացը կաշկանդող արգելքները, նա մտեցվեց ժողովրդական հոծ զանգվածներին, դարձավ մեր ազգաբնակչու-

¹ Լենին — Сочинения, т. XVII, стр. 178.

² Ստալին, «Մարքսիզմը և ազգային-զաղութային հարցը», էջ 100.

³ Նույն աեղում, էջ 263.

⁴ Նույն աեղում.

թյան կուլտուրական մակարդակը բարձրացնող հզորագույն լծակներից մեկը՝ Սակայն այդ բոլորի հետ անհրաժեշտ էր, որ մեր լեզվի ժողովրդականացման պրոցեսը արագացվեր։ Այդ պատճառով իսկ Հայաստանում սովետական կարգեր հաստատվելու առաջին տարիներին մեր պետությունը ձեռք առավ մի շարք միջոցներ, որոնք դուրսացրին պետական լեզվի ուսուցումը, հասկանալի դարձրին այդ լեզուն աշխատավորության հոծ զանգվածներին, հիմնովին փոխեցին աշխատավորության կարծիքը մեր գրավոր լեզվի մասին։

Այդ միջոցառումներից առաջինը ուղղագրության հարցի կարգավորումն էր։

Հայոց լեզուն երկար տարիների պատմության ընթացքում խոշոր փոփոխությունների էր ենթարկվել, իսկ նրա ուղղագրությունը մնացել էր ավանդական՝ գրաբարյան։

Այդ հանգամանքը ավելի ընդգծեց մեր ուղղագրությունը կանոնավորելու և մի շարք բաների գրության ու արտասանության միջև եղած տարբերությունները մեղմացնելու անհրաժեշտությունը։ Ուղղագրության համար մղված պայքարը, ինչպես հայտնի է, շատ հին պատմություն ունի։ Այդ պայքարի մեջ դրսևորվել է ազգային կուլտուրայի նկատմամբ հայ ժողովրդի տարբեր խավերի ցուցաբերած վերաբերմունքը։ Այդ պայքարը թեև վերջնական հաղթանակով չի պսակվել, բայց մեծ ազդեցություն է գործել ազգային կուլտուրայի զարգացման վրա։ Ուղղագրության համար սկսված պայքարը որևէ արդյունքի չի հասել, առաջին հերթին այն բանի շնորհիվ, որ անհատական շրջանակներից դուրս չի եկել. նա պետական գործ չէր համարվում նախառևույզիոն շրջանում։

Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո, մեր լեզվի ուղղագրության հարցը նորից ասպարեզ է հանվում։ Բայց այս անգամ՝ ոչ որպես մասնավոր գործ։

Հայ ժողովրդի պատմության մեջ առաջին անգամ հայ աշխատավորության ջանքերով ստեղծված պետությունը իր ձեռքն է վերցնում ինչպես մեր կուլտուրայի, նույնպես և մեր լեզվի ուղղագրության գործը։ Մեծավաստակ գիտնական Մ. Աբեղյանը, մեր կառավարության հանձնարարությամբ, մշակում է ուղղագրական ուղեցույց, որը 1922 թվին հաստատվում է և գործածության մեջ մտնում։

Այդ ուղեցույցի համաձայն, ավանդական ուղղագրության մեջ մացվեցին հետևյալ փոփոխությունները.

ա) Վերացվեց բառավերջում ա և ո ձայնավորներից հետո գրվող, բայց չարտասանվող յ-ի գրությունը։

բ) Բառակցի յ-ն փոխարինվեց և-ով։

գ) Այբուբենից հանվեցին օ և և տառերը։ Օ-ն փոխարինվեց օ-ով, իսկ և-ն՝ և-ով — բոլոր դեպքերում։

դ) Բոլոր այն դեպքերում, երբ բառամիջում կամ բառավերջում զրվող օւ-ն կամ ռ-ն վ էին արտասանվում, փոխարինվեցին վ-ով։

եւ, եռ, իւ, օւ երկբարբառները փոխարինվեցին յա, յռ, յու, օյ երկհնչյուններով։ Այդ բարեփոխության նվաճումները կարելի է համարել՝ 1. բառավերջի համար յ-ի վերացումը, 2. վ և յ հնչյունների գրության

կայունացումը, 3. երկրաբառանների վերացումը, 4. միօրինակ դրության սահմանումը նույնահունչ, բայց տարբեր իմաստ ունեցող բառերի համար:

Այս ռեֆորմը մեծ չափով հեշտացրեց մեր ուղղագրությունը, մատչելի դարձրեց այն մեր ժողովրդական հոծ զանգվածներին: Բայց նա ուներ որոշ ծայրահեղություններ: Այն ժամանակ, երբ դեռևս որոշ մարդկանց համար պարզ չէին մեր կուլտուրայի ու լեզվի զարգացման հեռանկարները, դժվար էր միանդամից ստեղծել կուռ և անխոցելի ուղղագրություն: Այդ պատճառով էլ, չնայած իր մեծ և անժխտելի առավելություններին, ուղղագրական այդ ռեֆորմն ուներ լուրջ թերություններ, որոնք ավելի էին ակնբախ դառնում այն բանի շնորհիվ, որ մեր նոր սերնդի համար անչափ դժվարացավ մեր հարուստ կուլտուրայի, մեր հին լեզվի, նախասովետական շրջանում ստեղծված ճոխ գրականության օգտագործումը. դրանից բացի՝ այդ ռեֆորմի հետևանքով մեր այբուբենից հանվեցին ե և օ տառերը, փոխվեցին ե և օ տառերի հնչյունները և ավելացավ յ և վ տառերի ավելորդ գրությունը. բառասկզբի ե-ն և օ-ն դրվեցին երկուական տառով՝ յե-ով և վօ-ով: Այսպիսով, ուղղագրական նոր ռեֆորմը որպես մի պատվար կանգնեց հայոց հին և նոր կուլտուրաների միջև և սպառնում էր որոշ չափով կարել այդ կուլտուրաների կապը: Այդ հանգամանքի վրա ժամանակին իր ուշադրությունը դարձրեց մեր պարտիան և հանձնարարեց կառավարական մարմիններին, առաջին հերթին Տերմինաբանական կոմիտեին՝ զբաղվելու նոր ուղղագրության այդ ծայրահեղությունները մեղմացնելու խնդրով: Տերմինաբանական կոմիտեն 1940 թվին իր մի քանի նիստերում քննության առավ մեր ուղղագրության մասնակի բարեփոխության հարցը և հաստատեց կոմիտեի անգամ ընկեր Գ. Սեվակի ներկայացրած նախագիծը, որը շոշափում էր յ ձայնակապի և բառասկզբի ձայնավորների հարցը:

Այդ մասնակի բարեփոխության հետևանքով մեր ուղղագրության մեջ մտան հետևյալ փոփոխությունները.

ա) Վերականգնվեցին հայոց այբուբենի և գրականության մեջ օ և ե տառերը:

բ) Վերականգնվեց ե և օ տառերի արտասանությունը բառասկզբում. օրինակ՝ որպես, որսկան, օրևե, եղբայր, եղջյուր, եզակի և այլն:

գ) Սահմանվեց յ ձայնակապի օգտագործումը միայն ա-ից և օ-ից հետո, օրինակ՝ նայել, հրամայել, շոյել և այլն:

դ) Ասանվեց եմ օժանդակ բայի տարբեր ձևերի հաստատուն ուղղագրությունը, ինչպես՝ եմ, ես, ե, եմք, եք, եմ, էի, էիր, էր, էիմք, էիք, էին:

Այդ որոշմամբ չափավորվեցին մեր ուղղագրության ծայրահեղությունները. վերացվեց մեր լեզվի հին ու նոր շրջանների միջև կամայականորեն առաջ բերված ընդհատվածությունը և ստեղծվեց մանկավարժական, գիտական և ավանդական սկզբունքները բավարարող ուղղագրություն, և վերականգնվեց օ և ե տառերի գործածությունը:

Այդ որոշումը մի նոր էտապ էր նշում մեր լեզվի զարգացման պատմության մեջ. նա պայմանավորված էր մեր կյանքում կատարված փոփոխություններով, մեր կուլտուրայի զարգացման աստիճանով:

Պակաս նշանակություն չունեն մեր լեզվի զարգացման համար նաև կետագրության ընդհանուր նորմաների սահմանումը:

Ինչպես հայտնի է, կետագրությունը մեր ուղղագրության ամենահե-

դեղուկ բնագավառն է եղել: Մեր յուրաքանչյուր գրող ու բանասեր ունեցել է կետադրությունների իր ըմբռնումը և սեփական նորմաները: Սովետական իշխանության սկզբնական տարիներին որոշ չափով մեղմացվեցին այդ բազմազանությունները, բայց հատուկ օրենքով չորոշվեցին կետադրության նորմաները: Այդ բանը կատարվեց միայն Սովետական իշխանության պոլիթյան երրորդ տասնամյակում՝ 1943 թվին, երբ հատուկ որոշմամբ սահմանվեցին մեր լեզվի կետադրության ընդհանուր նորմաները, որոնց մշակման ժամանակ նկատի է առնվել նախ այն, որ կետադրության այդ նորմաներն ամբողջապես չհակադրվեն հայ առաջավոր և դասական գրողների գործածած կետադրության նորմաներին. երկրորդ՝ առանձին դժվարություն չներկայացնեն ուսուցման ժամանակ, և երրորդ՝ կարողանան, եթե ոչ հիմնովին, դոնե քավարար չափով սլարգ ու արտահայտիչ դարձնել գրավոր լեզուն՝ ըստ հնարավորին նրան մոտեցնելով բանավոր լեզվին: Այդ որոշումը մի այլ նպատակ էլ էր հետապնդում՝ որքան հնարավոր է, մեր պետական լեզուն ուժեղացնել, դարձնել կայուն և անխոցելի և չհակադրել աշխարհում ամենաառաջավոր լեզվին՝ ռուսաց լեզվի զարգացման օրինաչափություններին, այլ կիրառել այն լավը, որ ձեռք է բերել ռուսաց լեզուն իր զարգացման ընթացքում:

Հայրենական պատերազմի ընթացքում հատուկ որոշմամբ, որի նախապիծը ներկայացրել է պրոֆ. դ-ր Ա. Լարիբյանը, ճշտվեց նաև մի քանի հայուր բառի ուղղագրություն: Հայտնի է, որ հայոց լեզվում կային որոշ բառեր, որոնք շատ հին ժամանակներից սկսած երկկերպ գրություն ունեին, ինչպես՝ ազցւսն — ափցան. ւամաւանց-ւամարանց, բալխել-բախել, բարտի-բարոյ, գւլնու-գւլնդ, դարպաս-դարբաս, խառնաբնդոր-խառնափնթոր, ձագառ-ձագար, օւղիս-օւխ. սանտալիս-սանդուխ, օճորֆ-ոճորֆ, և այլն: Կանոնավորվեց այդ բառերի ուղղագրությունը. պահպանվեց այդ բառերի գրության այն ձևը, որը մոտ էր արտասանությանը:

Այդ բոլոր նորմուծություններն ու որոշումները անմիջապես դարձան մեր ողջ հասարակության սեփականությունը և նոր աստիճանի բարձրացրին մեր լեզուն: Կապիտալիստական որևէ այլ պետության մեջ այդպիսի բարեփոխումների չեն կարող ենթարկվել ազգային լեզուները առանց լուրջ վտանգի առաջ կանգնելու: Իսկ մեզ մոտ դրանք անհրաժեշտություն են՝ մեր պետական լեզվի զարգացման աստիճանով պայմանավորված:

Ցավոք սրտի, այդ հանգամանքը չեն կարողացել հասկանալ արտասահմանյան հայ մտավորականներից ոմանք և հայոց լեզվի բարեփոխման ամեն մի երևույթի դեմ են դուրս եկել ու մինչև այժմ էլ չեն ընդունում ինչպես մեր ուղղագրությունը, նույնպես և մեր լեզվի մեջ կատարված մյուս փոփոխությունները: Նրանցից ոմանք նույնիսկ այնքան հեռու են գնացել իրենց դատողությունների մեջ, որ հայտարարել են, թե Սովետական Հայաստանի կառավարությունը մեր ուղղագրությունը փոխելու իրավունք չունի, որովհետև ամբողջ հայության համար այդ պարտագիր և ընդունելի լինել չի կարող: Նրանք, սակայն, չեն հասկանում, որ միայն Սովետական Հայաստանի կառավարությունը այդպիսի համազգային գործ զնոելու իրավունք ունի, որովհետև նա է, որ կարող է ներկայացնել ամբողջ հայ ժողովուրդը, արտահայտել ամբողջ հայ

աշխատավորության շահերը, զարգացնել և առաջ տանել մեր կուլտուրան ու լեզուն:

Սովետական իշխանության տարիներին կազմվեցին բազմաթիվ բառեր ու հասկացողություններ, մեր լեզվի մեջ մտան միջազգային շատ տերմիններ, որոնք անհամեմատելիորեն հարստացրին մեր լեզվի բառապաշարը: Այդ բոլոր փոփոխություններն անասելի մի քառս կարող էին ստեղծել, եթե մեր պարտիան ու պետությունը չզլխավորեին սովետահայ գիտնականների, գրողների ու բանասերների աշխատանքը, չնչին մեր լեզվի զարգացման հեռանկարներն ու մեր լեզվաշինարարության սկզբունքները և չվերացնեին մեր կուլտուրայի ու լեզվի առաջընթացի դեմ կանգնած խոչընդոտները, որոնք առաջին հերթին արտահայտվում էին մեր լեզվի տերմինաշինարարության մեջ:

Ժամանակակից հայերենի տերմինաշինարարության հիմունքները, որոնք քննվել և ընդունվել են Տերմինաբանական կոմիտեում՝ իրենց հիմքում ունեն չամկ(ր)թարտիայի ազգային քաղաքականության և ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրայի հետագա զարգացման ու ծաղկման սկզբունքը: Այդ որոշումների մեջ հաշվի է առնվել մեր լեզվի, ինչպես նաև ՍՍՌՄ ժողովուրդների լեզուների, և առաջին հերթին ուսաց լեզվի տերմինաշինարարության երկարամյա պրակտիկան, անողորմարար պայքար է հայտարարվել ազգային ձևը ֆեոդալիզմից, ազգային ձևով գիտական տերմինների ճշգրիտ իմաստը աղճատելու փորձերի դեմ:

Սակայն այս չի նշանակում, թե հաշվի չի առնվել նաև մեր լեզվի պատմությունը: Հայտնի է, որ հայ ժողովուրդը իր դարավոր պատմության ընթացքում հաղորդակից լինելով հին և նոր աշխարհների ամենաառաջավոր կուլտուրաներին՝ իր լեզվի մեջ արտացոլել է այդ կուլտուրայի հարուստությունը, ստեղծել է գիտական և տեխնիկական շատ տերմիններ, որոնք մինչև այժմ էլ զործածվում են մեր լեզվում և մատչելի են մեր ժողովրդի հոծ զանգվածներին: Այդ հանգամանքը նկատի ունենալով՝ պահպանվել է հնուց մնացած միջազգային, կամ հայերենի օրենքով կազմված այն տերմինները, որոնք արդեն հասկանալի են ժողովրդին, թեև որոշ ձևով, որոշ չափով տարբերվում են մեր լեզվի մեջ նոր մտած տերմիններից:

Հայերենի գիտական և գիտա-տեխնիկական տերմիններ մշակելիս հաշվի է առնվել ա) գրական հայերենը, բ) գրաբարը և միջին հայերենը, գ) հայերենի բարբառները, և դ) միջազգային և առաջին հերթին ուսաց լեզվի տերմինաբանությունը: Նշելով այդ սկզբունքներից, որոշվել է.

1. Պահպանել այն բոլոր հայերեն ու հայացված տերմինները, որոնք ճիշտ արտահայտելով տերմինի ուսել իմաստը ապահովում են լեզվի մաքրության լենինյան դրույթը (ջերմաչափ, բուսաբանություն, երկրաչափություն և այլն):

2. Զխուսափել հայերեն նոր տերմիններ կազմելուց, եթե հնարավոր է այդ անել առանց օտար տերմինի ուսել իմաստի աղճատման (թոչնարուծություն, ձկնարուծություն, հարթաչափություն, ականանետ, զրահահար և այլն):

¹ Տերմինաշինարարության սկզբունքների նախագիծը ներկայացրել է ընկ. Գ. Սեվակը:

3. Վերցնել մեր բարբառների, կամ զբարարի մեջ պահպանված անհրաժեշտ բոլոր այն տերմինները, որոնք իրենց ձևով ընդունելի և մատչելի են գրական լեզվի համար (պարետ, տերություն, քութեշ, հոգուտ, մայթ, շիբ և այլն)։

4. Առանց որևէ կասկածանքի ընդունել և զործածել միջազգային անհրաժեշտ բոլոր այն տերմինները, որոնց հայերեն համարժեքները չկան, կամ չեն կարող կազմվել առանց իմաստի աղճատման (տարան, տարանել, ակտ, անեքսիա և այլն)։

5. Առանձնապես ընդգծել է ոուսաց հարուստ և առաջատար լեզվի դերը մեր տերմինաշինարարության մեջ։

Միջազգային տերմինները որոշված է ընդունել հետևյալ դեպքերում.

ա) երբ տերմինը կազմված է հատուկ անունից կամ զործ է ածվում մի եղակի դեպքի, երևույթի համար, իբրեւ նրա համար հատուկ դարձած (էնցիկլոպեդիստներ, բուլլետեններ, օտզովիստներ և այլն)։

բ) երբ տերմինները պատահական կամ ոչ տրամաբանական կապ ունեն իրենց արտահայտած ռեալ իմաստի հետ, կամ իրենց հայերեն համարմեքից տարբեր իմաստ և զործածություն ունեն (ռադիո, ասպիրին, դոկտոր, ասպիրանտ, քարտ և այլն)։

գ) երբ տերմինի թարգմանությունը թուլացնում կամ աղճատում է նրա հասարակական արժեքը, կամ ռեալ իմաստը (դիկտատուրա, դիալեկտիկա, մատերիալիստական և այլն)։

դ) երբ ուսմունք, ուղղություն կամ նրանց հետևորդ նշանակող տերմինն ունի իզմ, իկա, իկ, հոտ, ոս (իկ) ածանցը և հայերենում ընդունված ազգային ձև չունի (իդեալիզմ, տրեդյունիոնիզմ, ֆիզիկա, ֆիզիկոս և այլն)։

ե) երբ տերմիններն ունեն նեղ մասնագիտական իմաստ ու զործածություն և դուրս չեն գալիս բուհական, կամ մասնագիտական սահմաններից (ավիգո, ացետիլեն և այլն)։

Այդ հիմնական դրույթներից ելնելով՝ Տերմինաբանական կոմիտեն քննեց և ընդունեց մի շարք տերմիններ, որոնք թեև իրենց հայերեն համարժեքներն ունեին, բայց չէին կարող արտահայտել միջազգային դարձած այդ բառերի հասարակական և քաղաքական արժեքն ու նշանակությունը։

Այդ բառերից առաջին հերթին կարելի է նշել սովետ բառը, որը վաղուց էր ինչ մեր ժողովուրդը զործածում էր։ Սովետ բառը հասարակական նոր իրադրության հետ էր կապված, նա մի սիմվոլ է, որի մեջ մարմնացած է այն լավագույնը, որ ստեղծել է մարդկությունը դարերի ընթացքում։

Ահա թե ինչու Տերմինաբանական կոմիտեն հատուկ որոշումով պարտադիր դարձրեց սովետ, ինչպես նաև մի շարք այլ բառեր՝ պարտիա, ռեսպուբլիկա, սեսիա, դեսյուտատ, և այլ բառերի կիրառությունը։

Այդ որոշման նպատակն էր ցույց տալ տերմինաշինարարության ճիշտ ընթացքը, վերացնել բուրմուռական-նացիոնալիստական ազդեցության հետքերը և ապահովել մեր լեզվի անկաշկանդ զարգացումը։

Մեր լեզվի բառապաշարի հարստացման ու տերմինաշինարարության հետ սերտորեն կապված է օտար բառերի տառադարձությունը, օրը նույնպես, չնայած այն բանին, որ տարիների պատմությունն ունի, բայց մինչև հա-

յաստանում Սովետական կարգերի հաստատումը անլուծելի էր ֆեազել։ Այդ հարցի լուծումը երկար աշխատանք ու ժամանակ պահանջեց։ Նախ՝ անհրաժեշտ էր պարզել մի շարք երևույթներ, որոնք առաջին հերթին կապված էին հայերենի հնչյունական օրենքների հետ։

Հայտնի է, որ ժամանակակից հայերենի հնչյունաբանությունը որոշ չափով տարբերվում է ինչպես հին լեզվի, նույնպես և արևմտյան հայերենի հնչյունաբանությունից։ անհրաժեշտ էր պարզել՝ թե օտար բառերի տառադարձության ժամանակ հնչյունաբանական ինչպիսի օրինաչափություններ նկատի պետք է ունենալ։ Այդ հարցը լուծելիս ճիշտ կերպով նկատի է առնվել միայն արևելյան հայերենի՝ մեր պետական լեզվի գործող հնչյունաբանությունը՝ զանց չառնելով, սակայն, նաև որոշ բառերի տրագիցիոն ուղղագրությունն ու տառադարձայնությունը։

Այստեղ, սակայն, պետք է վճռվեր ևս մի այլ հարց՝ փոխառված բառի արտասանության հարցը։ արդյոք պետք է պահել եվրոպական բառերի եվրոպական տարբեր արտասանությունները, թե՛ մի արտասանություն և որը։ Սովետական կարգերում գտնվեց այդ հարցի ճիշտ լուծման ուղին։ պահվեց փոխառված բառերի ռուսական արտասանությունը երկու պատճառով։ ա) նրա համար, որ միջազգային բոլոր բառերը ռուսերենի միջոցով են անցնում հայոց լեզվին, և բ) այն պատճառով, որ այժմ աշխարհում միակ լեզուն ռուսերենն է, որ կարող է իր զարգացման հեռանկարներով ու ընթացքով փոքր ժողովուրդների լեզուների զարգացման օրինակ հանդիսանալ։ Օտար բառերի տառադարձայնության ժամանակ ռուսաց լեզվի արտասանությունը նկատի ունենալով հանդերձ, ուշադրություն է դարձվել այն հանգամանքին, որ ռուսերեն ազգային լեզվի հատուկ երևույթներ մեխանիկորեն չկրկնվեն հայոց լեզվում և չոտնահարվեն մեր ազգային լեզվի առանձնահատկությունները։ Այդ առաջին հերթին վերաբերում է ռուսերենին ոչ հատուկ (Հ, Զ, Ղ, Ծ, Զ, Փ, Ք) հնչյունների, կրկնատառերի և եվրոպական մի շարք լեզուների երկբարբառների տառադարձությանը։ Յուրաքանչյուր գրական լեզու ունի յուրահատուկ հնչյունական օրինաչափություններ, որոնք անխուսափելի են այդ լեզվի տվյալ շրջանի համար, ինչպես, օրինակ՝ հայոց լեզվի մեջ հնագույն շրջանում մտած ռուս կամ րուս սկսվող բառերի սկզբում որևէ ձայնավոր հնչյուն կամ շունչ է ավելացվել, այդ երևույթը առիթ է տվել հնչյունափոփոխության ենթարկելու շատ օտար բառեր։ Այժմ ռուսերենում չկա և հնչյունը, և բոլոր այն դեպքերում, երբ ռուսները փոխ են առնում օտար այնպիսի բառեր, որոնց մեջ և կա, ձևափոխում են այդ հնչյունը իրենց լեզվի հնչյունական գործող օրենքներին համապատասխան։

Նույն բանը կարելի է ասել նաև կրկնատառերի ուղղագրության մասին։ հայոց լեզվին յուրահատուկ չէ կրկնատառ գրությունը, որովհետև կրկնատառ բաղաձայնների արտասանության ժամանակ ուժեղ կամ թույլ է լսվում։ Այդպես չեն եվրոպական լեզուները։ Եվրոպական մի շարք լեզուների մեջ որոշ տառերի ճիշտ արտասանությունը պահպանելու համար նույնիսկ անհրաժեշտ են կրկնատառ գրություններ։ Ռուսաց լեզվին թեև հատուկ չէ կրկնատառ գրության այդ առանձնահատկությունը, բայց որոշ բառերում պահվում են կրկնատառերը, կամ ստուգաբանական նկատառումով, կամ էլ օտար բառի ուղղագրության ձեռն պահպանելու համար։ Սա-

կայն ուսուց լեզվում: նույնպես նկատվում է կրկնադարձների կրճատման տեղեկանքը: օրինակ՝ ак(к)лиматизация, ак(к)омпанент, ак(к)орд, ак(к)редитив, ак(к)уратно, ап(п)ерцепция, ап(п)етит, ас(с)ортимент, ат(т)рибут, ком(м)ерсант, ком(м)ерческий, диф(ф)еренциал, диф(ф)узия, диф(ф)узор և այլն: Ժամանակակից հայերենում, որպես ընդհանուր օրենք, կրկնադարձ ունեցող օտար բառերը տառադարձվում են մի տառով, եթե կրկնադարձները չեն արտասանվում (կլասիկ, կոմունիստ, կոլեկտիվ և այլն: բայց՝ մասսա, կասսա, վիլլա, զալլ և այլն):

Սովետական կարգերում մեր լեզվի մեջ կատարված յուրաքանչյուր փոփոխության նպատակը եղել է՝ ավելի պարզ ու հասկանալի դարձնել մեր լեզվի իրողությունները, ավելի ընդգծել բառերի ու բառակապակցների իմաստները: Այդ տեսակետից ուշագրավ է օտարազգի ս, ս, օ, յե ձայնավորների, քմայնացած բաղաձայնների, ինչպես նաև ուսերենն և և յ վերջավորությունների տառադարձությունների հարցը: Այժմ նրանց տառադարձությունը թյուրիմացությունների և բաղաձայնությունների տեղիք չի տալիս, որովհետև արդեն սահմանված են դրանց տառադարձության նորմաները: ինչպես օրինակ՝

ա) Օտար յա և ուսերենն և և յ վերջավորություններ ունեցող մարդկանց անունները և տեղանունները միմյանցից տարբերելու համար մարդկանց հատուկ անունները հայերենում տառադարձվում են յա-ով, իսկ տեղանուններին՝ իա-ով (Վիկտորյա, Ասյա, բայց՝ Վիկտորիա, Ասիա, Անգլիա, Գերմանիա և այլն):

բ) Օտարազգի ևե կապակցությունը տառադարձվում է իե ձևով (կարիերա, բարիեր և այլն):

դ) Որպես ընդհանուր կանոն, չի օգտագործվում յ հնչյունը օտարազգի քմայնացած բաղաձայնների և օ, օ, յե ձայնավորների տառադարձության ժամանակ (դիրիժոր և ոչ՝ դիրիժոր, ռեժիսոր և ոչ՝ ռեժիսոր, օրեկտ և ոչ՝ օրեկտ և այլն):

Այս օրինաչափությունները, որոնք պետական հատուկ մարմնի որոշմամբ յարձված են պարտադիր մեր մամուլի ու բոլոր կազմակերպությունների համար, մեր լեզուն մեծ չափով պարզեցրել ու ավելի մատչելի են դարձրել ժողովրդական հոծ զանգվածների համար:

Մեր լեզվի մեջ կատարված տեղաշարժերը, սակայն, ավելի լայն շրջանակներ են ընդգրկում: Նրանք տարածվում են նաև մեր լեզվի ձևաբանության, շարահյուսության, բառակազմության և ուղղախոսության վրա: Այդ բաղաձայնի փոփոխություններից նշենք միայն մի քանիսը:

ա) Հատկացուցիչի հետադարձ գործածությունը.— Հայոց հին լեզուն՝ դարձաբարը հատկացուցիչներն ու որոշիչները գործածելու մեջ ավելի ազատ է եղել: Գրարարի մեջ կարելի է հանդիպել հատկացուցիչների և՛ նախադաս, և՛ հետադաս գործածության: այդ ազատությունը, որը անվիճելիորեն լեզվի առավելություն է, ժամանակակից հայերենին հատուկ չի եղել: Ռուսաց լեզվի ազդեցությամբ վերջին շրջանում մեր գրական լեզվում սկսեցին գործածվել հետադաս որոշիչներ, որոնք այժմ այնքան են ընդհանրացած, որ դժվար է կարծել, թե ժամանակակից հայերենի համար այդ արտասովոր երևույթ է եղել: Օրինակ՝ Ես տեսա Սկարները Խաչիկի, օրը Հայրենա-

կան պատերազմի ընթացքում շատ արժեքավոր գործեր է տվել, և ոչ թե՛
ես տեսա հաշիկի նկարները, հաշիկի, օրը... և այլն:

բ) Բայափօխառություններ. — Հայոց լեզուն շատ հին ժամանակներից
սկսած բազմաթիվ փոխառություններ է կատարել և սեփականել է դրանք,
բայց իր պատմության մեջ առաջին անգամ սովետական կարգերում օտա-
բազդի բայեր փոխառնելու կարողություն ձեռք բերեց: Առաջներում ասում
էինք մօբիլիզացիայի ենթարկել, իսկ այժմ, շնորհիվ այն հանգամանքի, որ
պետության կողմից օրինականացվել է բայափոխառությունների նոր տեխ-
նիկա, վերացվել է նկարարագրական ձեռվ օտար բայերը թարգմանելու
անհարմարությունը: Այժմ նախապատվություն տրվում է մօբիլիզացնել,
օկուպացնել, կոորդինացնել ձևերին, և ոչ թե այդ բառերի նկարագրական
կամ հարկադրական միջոցին, մանավանդ, որ իմաստային որոշ տարբերա-
կում է զգացվում նման բառերի նկարագրական և ոչ նկարագրական թարգ-
մանությունների մեջ:¹

գ) Շարանյութական օրոշ ձևերի անօրոշությունների վերացում. — Բայա-
ժամանակների, ինչպես նաև նախադասության համադաս անդամների և
համադաս նախադասությունների ներդաշնակությունը պահպանելու և համա-
ձայնությունը չխախտելու վրա լուրջ ուշադրություն է դարձվում: Ճշտվել է
մի շարք բառերի, ինչպես, օր և օրվեսդի, և և օւ (և՛ իբրև անջատող, ու՛
իբրև միացնող) շաղկապների գործածությունը, կրճատվել է շատ դերա-
նունների, առանձնապես՝ այս, այն ցուցական դերանունների առանց դո-
յականի կիրառությունը, կայունացել է մի շարք բայերի՝ ինչպես՝ ձեռնար-
կել (ընդունում է տրական հոլովով խնդիր), դիմավորել և այլ բայերի
խնդրառությունը և այլն:

դ) Բառապաշարի տեղաշարժեր. — Մեր լեզվի բառապաշարի մեջ կա-
տարված ակնբախ ու զգալի տեղաշարժերի մասին հանդիմանորեն խոսել
է ընկ. Գ. Սեվակը իր «Հայոց լեզվի զարգացման սովետական փուլը» շատ
ուշագրավ հետազոտության մեջ: Դրանից ավելի հազիվ թե կարելի լինի մի
հոգիվածում ասել: Միայն պետք է ընդգծել մեր պետական լեզվի նոր նվա-
ճումները, որոնք հապաված են ռեսպուբլիկայի գործունեության շրջանակ-
ների ընդարձակման և մեր պետության ապարատում կատարված կադա-
կերպչական վերակառուցումների հետ: Ես նկատի ունեմ մեր ռեսպուբլիկա-
յում Արտաքին Գործերի Մինիստրություն կազմելու հետևանքով 1945 թվին
օրինականացած 250-ից ավելի զիվանագիտական տերմիններ: Օրինակ՝
ուկնդրություն (ауденция), հանդիսավոր նաշկերույթ (բանկետ), սահմանու-
գծում (դեմարկացիա), ավանդադրել (депонировать), բախում (կոլիզիա),
հանձնարար (комит(т)ент), դեսպանորդ (посланик), հայրենադարձություն և
այլն: Միայն սովետական պայմաններում, լենինյան-ստալինյան ազգային
քաղաքականության իրականացման պայմաններում հնարավոր էր կարճ
ժամանակում և այնքան հաջող կերպով ստեղծել պետական կառավարման
ապարատի կարիքները լրիվ չափով բավարարող այդպիսի տերմիններ:

Այդ բոլորը ցույց է տալիս, որ մեր լեզուն զարգացման ճիշտ ուղու
վրա է դրված և անարգել ընթանում է դեպի համազգային լեզվի բար-
ձունքները:

¹ Տե՛ս Գ. Սեվակի — «Հայոց լեզվի զարգացման սովետական փուլը», Նրևան, 1946 թ.:

Այդ բոլորը վկայում են նաև այն մասին, որ մեր լեզվի զարգացման հիմնական, առաջատար ու կենսունակ ուժը լինիյան պարտիայի քաղաքականությունն է, որը ուղղություն է տալիս մեր տնտեսությանը, որոշում է մեր մարդկանց աշխարհայացքը ու զաղափարախոսությունը։ Առանց այդ քաղաքականության, առանց լինիյան-ստալինյան զաղափարների վերափոխիչ մեծ դերի, չէին կտրող առաջ գնալ և բարձր զարգացման հասնել ազգային լեզուներն ու կուլտուրաները մեր երկրում։

Սակայն որոշ մարզիկ չկարողանալով հասկանալ մեղանում իդեոլոգիաների և որպես իդեոլոգիական որոշ ձևի՝ լեզվի զարգացման նկատմամբ քաղաքականության ունեցած վճռական դերը, փորձում են՝ եթե ոչ շեղել, գոնե անորոշություններ մտցնել մեր լեզվի զարգացման ընթացքի մեջ։ Զխոսելով այդ ըստ էության թշնամական մտայնության մասին, չենք կարող ջնշել մեր պետական լեզվի համար սահմանված կանոններից կատարված այն շեղումները, որոնք ոչ միայն երևում են մեր առանձին գրողների գործերում, այլև երբեմն նկատելի են մեր մամուլում։

Այդ թերությունները կարելի է ամփոփել հետևյալ կետերում։

1. Լեզվի, ուղղագրության և շարահյուսության մեջ նկատվող անհետևողականություն։

2. Տերմինաշինարարության ասպարեղում հաճախ զգացվող անպատասխանատվություն։

3. Օտար բառերի տառադարձության նորմաների խախտում։

4. Տպագրված գործերի և հոդվածների մեջ երբեմն հայոց լեզվի տարրական կանոնների ոտնահարում, բայի ժամանակների անհամաձայնություն, նախադասությունների սխալ կազմություն և այլն։

Նույնիսկ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Ն. Մառի անվան Լեզվի Ինստիտուտի հրատարակած Ռուս-հայերեն բառարանը իր մի շարք թարգմանություններով, գործածած տերմիններով և որոշ բառերի տառադարձությամբ մեղանշում է մեր պետական լեզվի հանրահայանի նորմաների դեմ։ Լուսավորության Մինիստրության մի շարք բաժիններ և Դպրոցների Ինստիտուտը, որոնք մեր պետական լեզվի համար պայքարողների առաջին շարքերում կանգնած պետք է լինեն, շատ անփութ են պետականորեն սահմանված տերմինները կիրառելու և ուղղագրության նորմաները պահպանելու մեջ։

Այստեղ ավելորդ ենք համարում խոսել մի շարք գրողների, մեր դրական լեզվի արդի վիճակի հետ ոչնչով չառնչակցվող «նորամուծումներին» և «նորաձևություններին» մասին։ Նրանք ըստ երևույթին չեն կարողանում տեսնել հայոց լեզվի սովորական և նախասովորական շրջանների միջև եղած տարբերությունները և կարծում են, որ իրենց քմահաճությին համապատասխան կարող են վարվել մեր պետական լեզվի հետ։

Այդ բոլորը, իհարկե, մեր լեզվին հատուկ չեն, այլ պատահական թերություններ են, որոնք վերանալու են մերձավոր ապագայում։ Իսկ այդ նշանակում է, որ հեռու չէ այն օրը, երբ մեր լեզուն կդառնա ամբողջ հայության բազմակողմանիորեն զարգացած, հարուստ ու համապարփակ գրական լեզուն, որը հարազատ պետության քաղաքականության շնորհիվ համազգային լեզվի բարձր մակարդակին հասնելով՝ հաստատ ու աներեք քայլերով կընթանա դեպի է՝ ավելի փայլուն ապագան։